

403


# ՀԱՅԳԻՐՔ

Ա.Ռ.ԱԶԲԵՆ ՏԱՐԻ

ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՊԱՏՐԱՍՏԵՑ

ՏԻԿ. Կ. Ա. ՆԱԶԱՐ



1917

ԵՐԱՆ ՏՊԱՐԱՆ

ՊՕՍԹԸՆ

Հայոց մատուցութեա  
1917 Մայիս 17  
Ըստուն  
Հ. Ա. Խաչար

Տ. Թիվուն 8. 403


# ՀԱՅԳԻՐՔ

Ա. Ռ. Ա. Զ. Խ.

ԱՄԵՐԻԿԱՆ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՊԱՏՐԱՍՏԵՑ

ՏԻԿ. Կ. Ա. ՆԱԶԱՐ



1917

ԵՐԱՆ ՏՊԱՐԱՆ

ՊՈՎԲԸՆ

ա բ դ դ ե զ է ը թ  
 ժ ի լ ի ս ծ կ հ ձ շ  
 Ճ Մ Ջ Ն Շ Ռ Հ Վ Ջ  
 ռ ս վ տ ր ց ւ փ ք  
 և օ ֆ

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ  
 Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Շ  
 Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ  
 Ռ Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Ք

Օ Ֆ

1 2 3 4 5 6 7 8 9 0

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այսպիսի գասագիրք մը պէտք չունի յառաջաբանի.  
որովհետև այս գրքոյկը ինքնին յառաջաբան մըն է  
Հայզիրքիս ամբողջ գասընթացքին համար :

Բայց կուզեմ Հայզիրքիս բռաջին էջերուն սկիզբը  
քանի մը խօսք ըսել անոնց, որ իբրև ուսուցիչ այս  
գիրքը պիտի տան Հայ պզտիկներու ձեռքը :

Հայզիրքին բացարձակ նպատակն է միայն Հայե-  
րէն լեզուն սորվեցնել Հայ պզտիկներուն, իմ մայրա-  
կան և ուսուցչական փորձառութեանց վրայ :

Նկատի առնելով միջավայրի իրական դժուարու-  
թիւնները, ես, ինչպէս գիտել տուի, փորձառու-  
թեամբ գտայ մեթու մը՝ Ամերիկայի Հայ փոքրիկնե-  
րու Հայերէն սորվեցնելու համար. մեթու մը որ կա-  
տարելապէս մանկավարժական է, և վստահ եմ, որ  
այս մէթուով Ամերիկայի Հայ մանուկներ դիւրու-  
թեամբ, և հետեւաբար շատ ալ սիրով պիտի սորվին  
իրենց մայրենի լեզուն :

Այդ մէթուով երկու գլխաւոր սկզբունքի վրայ  
հիմուած է,

Առաջին՝ պարզութիւն  
Երկրորդ՝ կրկնութիւն

Պարզութիւն ըսելով կը հասկնամ Հայերէն լեզուի  
ամենէն ծանօթ և յաճախ գործածական բառերու հա-  
մադրութիւնը, նոյնքան պարզ, նոյնքան գործածա-  
կան ասացուածքներով ու նախադասութիւններով :

Զոր օրինակ, Հայզիրքիս այս առաջին տարւոյն  
մէջ՝ չկայ բառ մը, խօսք մը, որ պարզ, հետեւաբար  
գիւրահասկնալի չըլլայ : Այս գիրքին մէջ տղաք պիտի  
չհանդիպին անծանօթ և դժուար բառերու, հազիւ

պիտի տեսնեն քառավանկ քանի մը բառեր, զորս  
ստիպուած էի գործածել:

Կրկնութիւն ըսելով կը հասկնամ, նոյն բառերու,  
նոյն խօսքերու, նոյն նախադասութիւններու, այլազան  
ու զանազան ձեւերով յեղյեղումը՝ ձանձրոյթ չպատճա-  
ռելու պայմանով։

Կրկնութեան մէթոտը Ամերիկեան մանկավարժու-  
թիւնն ալ որդեգրած է, մանաւանդ ոչ-Ամերիկացի-  
ներու Անգլիերէն սորվեցներու համար, և պէտք է  
խոստովանիլ — մեծ ցաւով — թէ Հայերէնը Ամերի-  
կայի Հայ պատիկներուն համար կերպով մը սկսած է  
դադրիլ մայրենի լեզու ըլլալէ, և կրկնութեան մէթոտը  
եթէ հաճելի չթուի Հայերէնի վարժ եղողներու, բայց  
իրապէս օգտակար և մեծապէս արդիւնաւոր պիտի  
ըլլայ փոքրիկներուն համար, որոնք անգդալապէս  
կրկնուած և շեշտուած բառերով շուտով պիտի ընտե-  
լանան հայացի խօսուածքի և պիտի ըմբռնեն զանոնք,  
և պիտի սիրեն Հայերէն խօսիլ և գրել։

Պարզութեան եւ կրկնութեան մէթոտին լծորդած եմ  
նաև երեք որոշ պայմաններ։

Առաջին. — Հայերէն այրութենի գիրերը սորվեցը-  
նել տղոց ամենէն չատ գործածական բառերու միջո-  
ցաւ։

Զոր օրինակ, ՏՈՒՆ, որ աղոց ծանօթ բառերուն  
ամենէն գործածականներէն մէկն է, առաջին դասին  
նիւթ ըրած եմ, և այսպէս հետզհետէ, այս դասա-  
գիրքի սկիբքէն մինչեւ վերջը, տղաք սորված պիտի  
ըլլան բոլոր Հայերէն գիրերը։

Դարձեալ պարզութեան համար առաջին դասերու  
մէջ զլիսագիրները չեմ դրած, բայց դրած եմ ետքը։  
այնպէս որ տղաք մեծ դիւրութեամբ տպագրուած  
գիրերու պարզ մէկ երկու ձեին կը վարժուին։

Երկրորդ. — Հայերէն բառերու հեգը մանկավար-  
ժական լուրջ դժուարութիւններէն մէկն է։ Իմ փոր-

ձառութեամբ փոքրիկներու համար Հայերէն գիրերու  
բնական ձայնները սորվեցնել աւելի լաւ է, քան թէ  
հին վերլուծական հեգի ձևը։ այբ, բեն, զիմ, եւալլն։

Արդ՝ այս գիրքին մէջ ուսուցիչներ և տղաք հա-  
ւասարապէս պիտի ըմբռնեն որ ես բառերը տղոց ըը-  
նական և դիւրին կերպով հեգել տալու համար միա-  
ցուցիչ գիծերով զատած եմ վանկերը, և անձայն կամ  
համր ձայնաւորները դրած եմ իհարկին, որ բառին  
կատարեալ հեգն ու արտասանութիւնը ինքնին հարթ-  
և դիւրին ըլլայ։ Այս մէթոտը ամենէն բնականն է  
ըստ իս։ Եւ ուսուցիչները փորձով պիտի հաստատեն  
թէ տղաք ո՞րչափ դիւրութեամբ պիտի հեգեն բառե-  
րը և պիտի վարժուին վանկերը զատելու։

Ուշադրութիւն ըրած եմ որ բառ մը միայն մէկ  
անգամ միացուցիչ գիծով կամ գիծերով զատուի եւ  
համր ձայնաւորները միշտ չկրկնուին, այս պատճա-  
ռաւ, զոր օրինակ, զրլուխ բառը մէկ անգամէն եւ  
մէկ ակնարկով վանկերու զատուած և հեգուած տես-  
նելէ ետք, ա՛լ զլուխ ձեռվ պիտի տեսնեն, պիտի հե-  
գեն, պիտի արտասաննեն և պիտի գրեն։

Երրորդ. — Հայերէն Գրավարժութիւն։ Տղաք պէտք  
է որ կարող ըլլան իրենց սորված բառերը այնքան  
դիւրութեամբ գրել։

Այս նպատակով ես դասերէն ոմանց վերջը դրի  
գրավարժութեան փորձեր միւնոյն դասի բառերէն եւ  
խօսքերէն։

Իսկ դրութիւնը դիւրացներու համար ընտրեցի  
Հայերէն գիրերուն միազիծ դրութիւնը։ ինչպէս  
յայտնի է Հայերէն գիրերուն մեծ մասը ձեռագրի մէջ  
կրկնազիծ են։ (այսպէս բ. դ. ի. թ. ի. ս. ր.) ու մնա-  
ցածներն ալ պոչերով ու ծայրերով կը զարդարուին։

Հստ իս աւելորդ է պղակներուն յոդնութիւն եւ  
դժուարութիւն պատճառել այդ ոչ էական գիծերով  
և գրչի խաղերով։

Հայ տղոց պէտք է սորվեցնել Հայերէն գիրերուն  
ամենէն պարզ ձևերը , և երբ անոնք գիտակցութեամբ  
սորվին գիրերու պարզ և հիմնական ձևերն ու կազ-  
մերը , ետքը իրենց համար շատ գիրին պիտի ըլլայ  
գեղագրել զանոնք իրենց ճաշակին համեմատ :


Պիտի խնդրեմ ուսուցիչներէն , որ նկատի առնեն այս  
բոլոր բացատրութիւնները և գործածեն գասագիրքն  
դասախոսութեան համար , և վստահ եմ որ թէ իրենց  
և թէ պղտիկներուն աշխատութեանց արդիւնքը շատ  
գոհացուցիչ պիտի ըլլայ :

Այս դասագիրքը պղտիկներուն հաճելի և սիրելի  
ընծայելու համար ո՛չ միայն ինամք տարի ուսուցման  
մէթոսին , այլ նաև նիւթերու ընտրութեան , պատ-  
կերներու պատրաստութեան , թուղթի և տպագրու-  
թեան գեղեցկութեան :

Կարելի եղած ամէն ջանք ի գործ դրած եմ որ  
ՀԱՅԳԻՐՔԸ ըլլայ Ամերիկայի Հայ տղոց իրական եւ  
անմրցելի դասագիրքը :

Երանի՛ թէ իմ այս ջանքս գոնէ չափով մը օգնէր  
հայութեան պահպանութեան Ամերիկայի մէջ :

Այս ոգիով աշխատած եմ իմ թէ ուսուցչութեան  
և թէ ՀԱՅԳԻՐՔԸ պատրաստութեան ատեն , և այս  
ոգիով ալ կը նուիրեմ զայն Ամերիկայի Հայոց նորա-  
փըթիթ սերունդին :                           Տիկ . կ . Ա . ՆԱԶԱՐ



## տուն


տունը, տունը

ա-հա տունը


տես սա տունը

տուն, տունը

սա տունը



շուն,  
շունը,  
ահա  
մեր  
շունը,  
տեսաթ  
մեր  
շունը,  
տեսաթ  
մեր  
տունը,  
ահա  
մեր  
շունը,  
ահա  
մեր  
տունը:



ա-բամ  
կա-տուն  
արամ  
տես  
սա  
կատուն,  
ես  
տեսայ  
կատուն.  
ես  
տեսայ  
շունը,  
այս  
կատու  
է,   
այն  
շուն  
է:  
շունը  
և  
կատուն,  
մը-տան  
տունը  
մտան  
մեր  
տունը:

Արամ պիսաւ կատուն  
Ես պիսայ շունը:



*մուկ*

մուկ, մուկը, տեսաւ,  
կատուն տեսաւ մուկը,  
կատուն և մուկը,  
մտան մեր տունը,  
կատու և շուն և մուկ,  
կատու, կատու, տես սա մուկը,  
ահա մուկը, ահա տունը,  
ահա շունը, ահա կատուն:

Տայրին, դիսայ Տուհին, զուհին:  
Կատուն գուհին:

*մայթիկ*

մայթ, մայթիկ, մայթիկ,  
իմ սիրուն մայթիկ,  
տեսա մեր կատուն,  
կատուն տեսաւ մուկը,  
շունը տեսաւ կատուն և մուկը,  
մայթիկ, սիրուն մայթիկ,  
տես կատուն, շունը, մուկը,  
տեսան մեր դուռը  
մը-տան մեր տունը,  
մտան մեր դուռը:

Տայր, Տայրին, Տիշտան, Տիշտան.  
Դիսայն, դիս, շուն,  
շունը, սիրուն, Կատուն:



ո՞ւթ ես սա-թե-նիկ,  
մայրիկ, հոս եմ,  
ո՞ւթ է եղ-բայ-ըըդ,  
ո՞ր եղբայ-ըըս, մայրիկ,  
ա-րամը, արամը,  
արամը հոս է, դուռին մօտ:  
արամ, հոս ե-կութ,  
տես մեր կատուն և շունը  
սե-ղա-նին տակը մը-տան,  
ո՞ւթ մտան, սեղանին տակը:

Ասրինիկ, Խորայր, Խորայր -  
ուր, Արտօն, աթօն, ցոռոն,  
սիզառ, Տօն, հոս, թխոր:



### սա-թե-նիկ

արամ, դուն դուքս գը-նա,  
սաթենիկ, դուն ալ սեղանը շտկէ:  
հիմա հայ-ըի-կըդ կու-գայ.  
այո՛, մայրիկ, հիմա կը շըտ-կեմ:  
ահա կը-տաւ-ւը, կտաւը,  
ահա պը-նա-կը, պնակը,  
հիմայ կար-գըն է դը-գա-լին,  
դանա-կին, դգալին, դանակին.  
մէկ մէկ ալ գաւաթ, գաւաթ,

ա-թոռ մը մայթիկիս,  
աթոռ մը հայթիկիս,  
աթոռ մը արամին,  
աթոռ մըն ալ ինձ:

տուրս, ֆաս, ցուշ աչ, ցողիք.  
սրջան, այս, իրմայ, ցու գայ,  
հայրիք, այնայ, ց գայ, ց անայ,  
գաւայթ, աթոռ, ի՞նչ, չ չ չ.

Սիրելի Արմենէ,  
Ես կրնամ նամակ գրել:  
Մենք ունինք տուն մը, կատու մը եւ  
շուն մը:  
Եղբայրս կը խաղայ դուրսը:  
Ես սեղան կը շտկեմ, գաւաթ, պնակ,  
աթոռ, գգալ ալ կը դնեմ, հայրիկիս, մայ-  
րիկիս, Արամին եւ ինձ համար:  
Դուն ալ նամակ կրնա՞ս գրել:

Սաթենիկ

ցուշ, ցուշոյ. Տիր, ահա.  
Ե, այս, ցտանիք, ցուշոյ:  
այ, ու, ց, ն, ց, ա, թ.  
Ե, ր, հ, ս, յ, չ, չ:

**ՓԻՍԻԿ**

Եկուր, փիսիկ,  
Շո՛ւտ, շո՛ւտ եկուր.

Քեզ պիտի տամ

Լաւ կերակուր:

Կտոր մը միս

Նաեւ մածուն

Երբեմն ալ հաց

Կը սիրես դուն:

Ալ կշտացար,

Աղուոր փիսիկ,

Կարդա՛ մըու մըու

Նստած մօտիկ:

Կ, ու, այ, ար, զուն, պիս,  
Կուռու, ահաս, պիսայ, պիսար:



**ԽԱՂ, ԽԱՂԱՂ**

Արա՛մ, եկուր պարտէզ երթանք. Ես  
պուպ-րի-կըս առնեմ, դուն ալ առ կառ-  
քըդ:

Ես չատ կը սիրեմ պուպրիկս:

Ես ալ կառքս չատ կը սիրեմ:

Մաթենիկ, սա տը-դաք ալ գան մեր  
պարտէզը, եւ խաղանք:

Կ, թ, փ, թ, դ, ր, թ, ժ, ց.  
Ո, օ, ու, ի, ի, հ'չ'չ'չ'չ'ց.  
Բ, զ, և, ւ, ի, ո, թ, յ, ց.

Կարինէ, գնա՛ պուպրիկդ ալ բեր եւ  
խաղանք:

Տիրան, դուն ալ ձիդ բեր, եւ կառք

խաղանք:

Կարինէ հիմա կուգայ,

իր պուպրիկը կը բերէ,

Միասին կը խաղանք:

Կարինէ՛ շուտ եկուր, շո՛ւտ:

Տե՛ս, հոս, վարդին քով

Օր-ըան մը շինեցի:

Կարինէ՛, դուն վարդ կը սիրե՞ս,

Ես շատ կը սիրեմ վարդը,

Շատ աղուոր հոտ մը ունի:

Նա-յէ, պուպրիկս կը քը-նա-նայ օր-  
րանին մէջ:

Եկո՛ւր, հոս, վարդին քով նըս-տինք,

Ես օ-օր ըսեմ,

Դուն ալ միասին ըսէ՛, Կարինէ:

Օ Պ Օ Պ

Օրօր, օրօր,

Իմ պուպրիկիս

Օրօր, օրօր

Իմ սիրունիս:

Օրօր ըսէք

Անուշ հովեր,

Օրօր ըսէք

Վարդի թու-փեր.

Օրօր ըսէք,

Իմ սիրունիս,

Օրօր ըսէք


Իմ պուպրիկիս:

Սաթենիկ, տե՛ս սա քա-րե-րը,  
Եկո՛ւր տուն մը շինենք,  
Մեր պարտէզին մէջ,  
Դուն ալ օդ-նէ ին-ծի:  
Տունը պուպրիկին համար է:  
Ահա՛ դուռը շինեցի,  
Պա-տու-հան մըն ալ,  
Եր-կու պատուհան  
Պատուհանը բաց է  
Հիմա կընամ փակել:  
Դուռը փակէ՛, դուռը բա՛ց:  
Այս պարտէզին դուռն է:  
Ահա շը-նի-կըս ալ եկաւ,  
Եկուր սիրուն չնիկ  
Տե՛ս, տուն մը շինեցի  
Սաթենիկին պուպրիկին համար:

Բ, Գ, Թ, Կ, Ի, Խ, Ժ, Ծ,  
Ժ, Շ, Ր, Վ, Դ, Վ, Շ, Հ, Յ  
Ը, Կ, Ռ, Ջ, Շ, Վ, Վ, Յ, Յ

Արամ եկուր,  
Սա ծա-ռին տակ,  
Կա-նաչ խո-տին վրայ,  
Նստինք, խաղանք,  
Սեղան շտկենք.  
Քիչ մը հաց պա-նիր,  
Քիչ մըն ալ կա-րագ:  
Ահա հայրիկը,  
Ահա մայրիկը,  
Կուգան մեր քով.  
Տեսան մեր սեղանը,  
Հայրիկ, նստիր խոտին վրայ  
Մայրիկիս քով,  
Արամ, դուն ալ նստիր,  
Ահա փի-սի-կը եկաւ,  
Շնիկս ալ կուգայ:  
Հիմա շատ ուրախ եմ:

Տառ, կարսագ, պատճիր, հայ,  
Կիրայ, Եիր, Ցաղկիր, ուրաքի  
Լո, հրեայ, ուրդիր ունիք:



Սաթենիկ, տե՛ս սա թըռ-չունը,  
Մեր ծառին վրայ,  
Ի՞նչ սիրուն է ան,  
Ահա կ'երգէ թոչունը,  
Ճիւ, ճիւ, ճիւ, ճիւ:  
Տե՛ս, թըռ-ռաւ հիմա,  
Մը-ռաւ իր բոյնը,  
Մայրիկ, ո՞վ շինեց  
Մեր ծառին վրայ,

Թոչունին փոք-րիկ տունը,  
Թոչունները շինեցին:  
Հայրիկն ալ փայ-տէ բոյն մը շինեց,  
թոչուններուն համար:  
Հայրիկը շատ բարի է,  
Թոչունին բոյնը իր տունն է,  
Թոչունը իր բոյնին մէջ կը նստի, կը  
քը-նա-նայ:  
Ես ալ կրնամ շինել,  
Թոչունի բոյն մը:

Թըռչուն, Թոչուն, Բոյն, ցուն,  
Կը թոշի, Թուս, սրբուն թըռ-  
չուն հոս դյուր :

Մայրիկ, տե՛ս, պատուհանին մօտ,  
թռչուն մը եկաւ,  
Տե՛ս, ի՞նչ կ'ըսէ,  
Ես թռչուն մըն եմ,  
Կրնամ թռչիլ,  
Սիրուն բոյն մը ունիմ,  
Հոս, ծառին վրայ,  
Կը սիրեմ պարտէզ,  
Ծառ, ծաղիկ, կանաչ,  
Ահա ես թռայ,  
Չար կատուն կուգայ.  
Թը՛ռ, թը՛ռ, թը՛ռ,  
Ճիւ, ճիւ, ճիւ:

Ծառ, ծաղիկ, պարտէզ, թռչուն,  
Կացուն, կառաչ, Բոյն, ցուռն,  
Թռչիչ, Բոնիչ, ուդիչ.

Սիրելի Շուշան,  
Արամին հետ մեր պարտէզը ելանք:  
Արամ տուն մը շինեց Պուպրիկիս:  
Տունը ունի դուռ եւ պատուհան:  
Ծառին տակ սեղան շտկեցի,  
Պանիր, հաց, կարագ կերանք:  
Մայրիկս եւ հայրիկս ալ կերան:  
Պուպրիկիս օրրան շինեցի,  
Եւ օրօր ըսի:  
Դուն ալ եկուր մեր պարտէզը,  
Քեզ չատ կը սիրեմ:

Մաթենիկ

Սիրելի Վահէ,  
Մեր պարտէզը, ծառին վրայ բոյն մը  
կայ:  
Թռչունին տունն է այն,  
Հայրիկս ալ կը շինէ բոյն,  
Թռչունը իր բոյնին մէջ կը նստի, կը  
քնանայ:  
Ես ալ շինեցի թռչունի բոյն մը:  
Հայրիկս ծառին վրայ կախեց զայն:  
Թռչունը ուրախ, ուրախ թռաւ,  
Ճիւ, ճիւ, ճիւ, ճիւ, երգեց:

Արամ

ԱՂՋԻԿ ԵՒ ԹԻՉՈՒԻՆ

ԱՇԽ, սիրուն թըռչնակ,  
ինչո՞ւ չես երգեր դուն,  
Նըստեր ես տըխուր,  
Չե՞ս սիրեր մեր տուն:

— ԱՇ, բարի աղջիկ,  
Բանտ է այս վանդակ,  
Թող տուր ես թուչիմ,  
ՀԱՍՏ երջանիկ:

ԷՇ, աղուոր թըռչուն,  
Ես քեզ թող կուտամ,  
Բայց խօսք կուտա՞ս դուն,  
ՈՐ նորէն գաս հոս:


— ՉԵՇ, բարի աղջիկ,  
Գէշ է վանդակը,  
Կուգամ երգել քեզ,  
Հո՞ն, վարդին մօտիկ:



Արամ, մայրիկս ըստաւ, որ մեծ հայրի-կենց երթանք:


Մեծ հայրիկը ա-գա-րակ ունի,  
Ես շատ կը սիրեմ ազարակը,  
Մընաս բարով, հայրիկ,  
Մընաս բարով, մայրիկ:  
Ահա մենք կ'երթանք,  
Չեզի նամակ կը դրենք,  
Հոն շատ բարի կ'ըլլանք:

Աֆարանց, հայրի-կենց, միջ  
հայրինց, միջ հայրինց. Բայս բա-  
րով. Բարի. Կ'իրթանք. Զամանց:



Սաթենի'կ, կը տեսնե՞ս մեծ հայրիկենց  
աղարակը:


Այո', կը տեսնեմ,  
Ո՞ւր է, հո՞ն է:  
Գետինը ի՞նչպէս կանաչ է,  
Ո՞րքան ծառեր կան:  
Կը տեսնե՞ս մեծ հայրիկը,  
Աղարակին մէջն է,  
Մեծ մայրիկը ո՞ւր է, չեմ տեսներ:  
Ան ալ տան ներսն է:  
Քալէ', շուտ քալէ':  
Հիմա կը հասնինք,  
Ո՞հ, շատ ուրախ եմ:  
Խաչ, շիրս, թշ, հոն ժ.  
Կանաչ գլուխ, դրսնի, Կէ  
դրսնի, զուց, հասնի, ուրախ.



Բարի լոյս, մեծ հայրիկ,  
Բարի լոյս, սիրուն Սաթենիկս,  
Բարի լոյս, աղուոր Արամս.  
Հայրի'կ, ո՞ւր է մեծ մայրիկը,  
Ներսը, հո՞ն ,տան մէջ:  
Շնիկն ալ հետը,  
Տե՛ս շուտ շուտ կը վազէ շնիկը,

Նայէ՛, պատուհանը նստեր է,  
Ո՞հ, ի՞նչ աղուոր է այս տեղը,  
Ես պուպիկս ալ բերի,  
Նայէ՛ մեծ մայրիկ:

Բարի զայս, թշ հայրիկ, թշ  
Հայրիկ, աֆարանի, նայէ՛, դժն.  
Ճնիկ, հեցը, ազուոր, սիրու ։



Սաթենիկ, եկուր, եկուր,  
Տե՛ս, հաւին տունը,  
Հաւին տունը կ'ըսուի հաւնոց,  
Տե՛ս, հաւ-կիթ-նե-րը,  
Մէկ, երկու, երեք,  
Ա՛ռ, վեր-ցուր, գետ-նէն ,  
Դիր այս զամ-բիւ-ղին մէջ:  
Ահա՛, մայր հաւը,  
Կըտ, կըտ, կըտ կ'ընէ,  
Ի՞նչպէս ճերմակ է,  
Մեր քովը կուգայ:

Տես ձա-գուկ-նե-րը,  
 Ի՞նչպէս գեղին են:  
 Նա-յէ՛, Արամ, նայէ՛,  
 Ո՞րչափ շատ են:  
 Մէկ, եր-կու, ե-րեք, չորս,  
 Հինգ, վեց, եօ-թը ու-թը:  
 Ծիւ, ծիւ, ծիւ, ծիւ,  
 Ահա կը վազեն,  
 Մայր հաւին քով:


Հաւ, հաւդր, փոխրից, ցիցին,  
 շամբրոց, Ցերևոց, Կը զայշին.  
 Տօն, հիւջ, յաջ, Կը նըտ, միւծին:



Մօ, մօ, մօ,  
 Կո-վը կը կան-չէ,  
 Ան ձագ ալ ունի,  
 Կովը խոտ կու-տէ,  
 Կովը կաթ կու տայ,  
 Մեծ մայրիկը կա-թը կը կը-թէ,  
 Կաթէն՝ մածուն եւ կարագ կը շինէ,  
 Պանիր եւ թան ալ կը շինէ,  
 Շատ կը սիրեմ մեծ մայրիկին կա-  
 րագը,  
 Ի՞նչ սիրուն է կովին ձա-գը,  
 Մեծ, մեծ աչ-քեր ունի,

Մեղի կը նայի,  
Եկուր, մօտը երթանք,  
Կովը մօ, մօ, մօ,  
Հորթու-կը կը կանչէ,  
Կովը կարմիր է,  
Հորթը կարմիր եւ ճերմակ,  
Ահա՛ ուրիշ կով մըն ալ,  
Ան ալ ճերմակ եւ սեւ է,  
Կովը եւ ճագը, գո-մը մտան,  
Գոմը, կովին տունն է:


Կոչ, հորթ, հորթուն, Կոչդր, աշխ,  
Տոր, հոսու, Կը պաշտ, Գոմ, Կը  
Վըշտ . Կարմիր, Մըծ Մըծ, Ակ—:



Ահա մեծ հայրիկին ձին,  
Խո-շոր ձի մըն է,  
Գոյնը ճերմակ է,  
Եր-կար պոչ մը ունի,  
Վը-զին վրայ երկար մազեր ունի,  
Հիմա ջուր կը խը-մէ,  
Զին խոտ կուտէ,  
Զին շատ խելացի կեն-դա-նի է  
Կ'ըսէ մեծ հայրիկը,  
Արամ ձի-ուն վրայ նստաւ,  
Զին ըս-կը-սաւ վազել:

Աղարակէն դուրս ելաւ,  
Նայէ, ճամ-բուն վրայ կ'երթայ,  
Խելացի ձին բերաւ Արամը,  
Մեծ հայրիկին աղարակը:  
Զին ա-խո-ռը մտաւ,  
Խոտ ու վարսակ կուտէ:

Ճի, Ճիրմակ, պոչ, Վաշտրուանի.  
Իրհար, զշիք, խէցայի, խոյ, ջուր,  
Ջամբայ, չաշիչ, գոյրա, Կինդանի:



Մէ, մէ, մէ,  
Ոչ-խա-րը կուգայ  
Աղարակին մէջ, կանաչ խոտ կուտէ,  
Տե՛ս, Արամ, ո՞րչափ շատ են,  
Կանաչ, կանաչ խոտերը կերան,  
Զուր խը-մե-լու կ'երթան:  
Այսօր շատ տաք է,  
Ոչխարները խոտին վրայ կը պառ-  
կին:  
Մեծ շունն ալ հոն է,  
Շունը ոչխարներուն պահապա-  
նըն է:

Ահա՛, կ'երթան չունին ետեւէն:  
 Տե՛ս, գառնուկները,  
 Ո՞րչափ սիրուն են,  
 Մայրիկէն կաթ կ'ուզեն,  
 Մէ, մէ, մէ, կը մայեն,  
 Ալ ի-րի-կուն է  
 Քը-նա-նալ կ'երթան:

Աչ-խար, ջառնուց, շաբ, Կ'ու-  
 դին, հինոյ, ջուր, խո-մի, Կ'ու-  
 թան, Խ-ու-նաց. ցոտք է այսօր.  
 Տայտչ, Կը Տայտճ, մի, մի:

Սիրելի մայրիկս,  
 Շատ կը սիրեմ մեծ հայրիկենց ա-  
 դարակը,  
 Արամ ալ շատ ուրախ է,  
 Հաւը հաւկիթներ ունի:  
 Մէկ հատն ալ դեղին, դեղին վառ-  
 եակներ ունի:  
 Վառեակները շատ սիրուն են:  
 Մեծ հայրիկը կովեր ալ ունի,  
 Ո-րոնք շատ շատ կաթ կուտան:  
 Մեծ մայրիկը, կաթէն շինեց մա-  
 ծուն, պանիր, կարագ:  
 Ոչխարները ճերմակ, ճերմակ բուրդ  
 ունին:  
 Գառնուկները մէ, մէ, մէ, կը մա-  
 յեն, կաթ կ'ուզեն մայրիկէն:  
 Մայրիկ դուն ալ հոս եկուր:  
 Աաթենիկ

Աիրելի հայրիկու,

Մեծ հայրիկին ձին շատ խելացի

է:

Զիւռն խոս եւ զուր տուի,

Անդամ մըն ալ վրան նստայ,

Ագարակին դուրս ելայ,

Շատ կը սիրեմ հոս մնալ.

Հայրիկ, դուք ալ հոս եկէք,

Եւ ամէն-քըս ալ հոս կենանք:

Արամդդ

ԳԱՐԻ-ՆՈՒ-ԿԸ

Սիրուն, անմեղ իմ դառնուկ,

Բուրդդ ճերմակ ու փափուկ,

Վաղելով դաշտ ու արօտ,

Մօրդ կը քաշես կարօտ:

Մի' լար, դա' ոնուկ, սիրական,

Փոքրիկ տղու մը նման,

Կուգայ մայրդ, հետը շատ


կը բերէ քեզ անուշ կաթ:

Մնաք բարով մեծ հայրիկ,  
 Մնաք բարով մեծ մայրիկ,  
 Հայրիկը նամակ գրեր է,  
 Մայրիկը մեզ ուզեր է,  
 Ալ տուն պիտի երթանք,  
 Շատ սիրեցինք ագարակը,  
 Հաւերը, վառեակները, կովերը, հոր-  
 թերը,  
 Ոչսարները եւ գառնուկները,  
 Նաեւ խելօք ձին,  
 Շնիկն ու կատուն:  
 Մնաք բարով, մնաք բարով,  
 Գալ ամառ նորէն կուգանք  
 Հայրիկին ու մայրիկին հետ:

Բայց Բարոյ, Առանց Ձրդյոր,  
 Կրոյր իր թագավոր աջակայքը . առև  
 ոչ կու գումաք:

Ահա՛, եկանք սիրուն մայրիկ,  
 Արամին հետը,  
 Նայէ քեզի ի՞նչեր բերինք,  
 Մեծ մայրիկը տու-աւ,  
 Պանիր, կարագ, հաւկիթ, մածուն,  
 Քեզի եւ հայրիկին համար:  
 Մեծ հայրիկն ալ լեցուց սա կո-  
 ղո-վը,  
 Նայէ՛, ի՞նչեր կան, ի՞նչ անուշ  
 պը-տուղ-ներ:  
 Խըն-ձոր, տանձ, սա-լոր,  
 Կե-ոաս եւ խա-ղող,  
 Ըն-կոյզ եւ նուշ,  
 Ազարակին մէջ շատ ծառեր կան:  
 Ծառերէն պտուղ քա-ղե-ցինք,  
 Շատ ուրախ էինք հոն,  
 Մայրիկը շատ բարի է:  
 Գալ տա-րի նո-րէն կը ուր-կէ մեզ:

Խնյոր, սաշոր, ցանք, կոռասա-  
 խազոյ, ընկոյ, նո-զ, առու-զ,  
 խաղիկինք, խ-զ-շ-ցինք, կողոյ,  
 պառոյ, հա-ցիթ, մածո-ն, պանիր:



Արամ, պատրաստ եղիր,  
Մայրիկը մեծ պարտէզը պիտի տա-  
նի մեզ:

Այս պարտէզին մէջ մեծ լիճ մը  
կայ,

Լիճին մէջ շատ ձու-կեր կան,

Մեծ ու պղտիկ միշտ կը լողան,

Հիմա հասանք պարտէզը:  
Եկուր, նայէ, ո՞րչափ շատ են ձու-  
կերը,

Հիմա քիչ մը հաց նետենք,  
Տե՛ս, տե՛ս, ի՞նչպէս կուտեն:  
Սաթենիկ, ահա թուղթէն նաւա-  
կըս,

Հիմա ջուրին վրայ դնենք,  
Ահա հեռուն կ'երթայ, կը սահի,  
Նաւակս կարմիր է:  
Հիմա ինծի կուգայ,

Ջուրէն դուրս հանեմ:

Յաւակ, յուց, յուցիր, հարմիր.  
Թուղթ, թուղթ, ԿԸ լոշառ, մժ,  
Հջ, հայ:

Լիճին մէջ նաւակըս,  
Ի՞նչ հանդարտ կը սահի.  
Մէկ մը աղ, մէկ մը ձախ,  
Մեղմ հովը կը տանի:  
  
Տես, կուգայ այս կողմը,  
Ի՞նչ հպարտ կը քալէ.  
Շատ ուրախ եմ հիմա,  
Որ մեզի մօտ կուգայ:



Հսկիւռը, սկիւռը, սկիւռը,  
Ծառին վրայ ելաւ.  
Ահա վար իջաւ,  
Քիչ մը հաց նետենք,  
Քիչ մըն ալ պիստակ,  
Տես ի՞նչպէս կը կոտըրտէ,  
Նըստած, երկու թա-թիկներով  
բըռնած է,  
Սուր սուր ակուաներով կը կո-  
տըրտէ,  
Միջուկը կը հանէ:  
Հիմա չորս հատ եղան:  
Որչափ սիրուն են,

Գեղեցիկ պո-չեր ունին:  
Սկիւռ ծառին վրայ  
Կը քնանայ գի-շե-րը:  
Թռչունին պէս՝ ան ալ բոյն ունի.  
Կ'ըսեն թէ սկիւռ շատ խելացի

է:

Ակրոց պոչ ունի, զար խճացի է:  
Վրացաց նը նորոց, նո-ոչը-ոց.  
Մրջունց նոց, նը մասաւ, թու  
Թիկնորոց նը թոց:

Հայրիկ, ի՞նչ է այս մեծ շէնքը,  
Տը-ղա-քըս եկէք, ներս մտնենք որ  
տեսնէք.  
Ահա ա-ոիւծ մը եր-կա-թէ վան-  
դա-կի մէջ է.  
Առիւծը միս կուտէ.  
Տես սա խոշոր կենդանին,  
Մանր աչքեր ունի,  
Երկար քիթ մը ունի,  
Տղաս, ան իր պա-տի-ճըն է,  
Երկար ակռաներ ալ ունի,  
Ասիկա փի-ղըն է,  
Փիղը շատ խելացի կենդանի է,  
Ամէն բան կուտէ  
Պատիճով կը բըռ-նէ,  
Բերանը կը տանի,  
Աս մարդը իր տէրն է,  
Փիղը ամէն տեսակ խաղեր կրնայ  
ընել:

Կիր, պատիճ, թիւն, դիօ, քա,  
ահուակը, պատահ, իրաք, իս  
շոր, առիծ, մաս նուց, ևաշը<sup>1</sup>  
աջիւր ունի. զբախ, զբախ մը, զբախ:


Եկէք, Երթանք պարտէղին միւս  
 կողմը:  
 Հոս ալ թռչուններ,  
 Ո՞րչափ սիրուն են,  
 Փե-տուր-նե-րը դոյն դոյն են:  
 Ոմանք կը պո-ռան, կը ճը-չեն,  
 Ու-րիշ-ներ ալ կ'երգեն,  
 Վան-դակ-նե-րու մէջ,  
 Վեր ու վար կը թռչին,  
 Դուրս ելնել կ'ուզեն,  
 Ոմանք ալ ջուրին վրայ կը լողան,  
 Նաւի պէս կը սա-հին,  
 Ասոնք սա-դեր են, ասոնք բա դեր  
 են,  
 Ասոնք ալ կա-րապ-ներ են,  
 Տե՛ս, ա-սոր պոչը,

Ահա մէկն ալ այս կողմը, պոչը  
 մեծ մեծ բացաւ,  
 Այս ալ սի-րա-մարդ է,  
 Ո՞չ, ի՞նչ գոյներ կան:  
 Ի՞նչպէս կը վայ-լին:

Կոյն, Գոյն Գոյն, սիրուունիր,  
 Կը քայլին, Կը սոսան, Կուսին.  
 Ասդ, ասդիր, Բայ, Բայդր,  
 Կարսու, Կարսունիր, Կրոսմարդ:

Սիրելի մեծ մայրիկ,  
Մեր տունը եկուր, քեզ շատ կա-  
րօտցայ,  
Մայրիկին հետ օր մը պարտէզ  
դացինք,  
Հոն լիճ մը կար, լիճին մէջ շատ  
ձռւկեր կային:  
Լիճին վրայ թուղթէ նաւ մը դը-  
րինք:  
Սկիւռներ ալ կային,  
Անոնք ծառին վրայ ելան,  
Ծառէն վար իջան, մեր քովը եկան:  
Ո՞րչափ թուղթները տեսանք, ջու-  
րին վրայ, խոտերուն վրայ, շատ ա-  
ղուոր էին, մեծ մայրիկ:  
Թոռնի-կըդ Սաթենիկ

Սիրելի մեծ հայրիկ,  
Հայրիկս, մայրիկս եւ քոյրս, պար-  
տէզ գացինք,  
Այս պարտէզին մէջ մեծ շէնք մը  
կայ,  
Հոն շատ խոչոր կենդանի մը տե-  
սայ,  
Հայրիկս ըստ, որ անոր անունը  
փիղ է:  
Առիւծ մըն ալ կար երկաթ վան-  
դակին մէջ:  
Սիրուն թուղթներ ալ տեսանք,  
Քեզ շատ կարօտցայ, Ե՞րբ պիտի  
դաս մեծ մայրիկին հետ, մեր տունը:  
Թոռնիկըդ՝ Արամ



Գիտե՞ս Արամ, երէկ ար-ձակուր-  
դը վեր-ջա-ցաւ,  
Այսօր դըպ-րոց պիտի երթանք,  
Մայրիկս ըսաւ, որ առ-տուն կա-  
նուխ ելնենք,  
Հիմա ժա-մը եօթն է,

Մայրիկ, ժա-զե-րըս սան-տը-րէ,  
Սաթենի'կ, սանտ-րը հոս բեր,  
Ե-րե-սըս-ու ձեռքերս ալ լու-ամ,  
Հիմա նա-խա-ճաշ ընենք,  
Ժամը ութուկէս է,  
Դպրոցի ժա-մա-նա-կըն է,  
Դը-րան զան-դա-կը կը զար-նէ,  
Ահա Սօ-ֆի եւ Տի-րան ալ եկան:  
Շուտ ըրէք, չուտ, հիմա կ'ու-շա-  
նանք,  
Այսօր շատ ուրախ ենք:

Դշուրոց, կանուխ, առ - ցուն,  
Ջա-խա-ջազ, զան - գայ, ծամ?  
Ջա-մա-նակ, ծա-մա-սոյ, սան  
դըր, սանդր, մազըս սանդրէ.  
Աօթի և Ալիրան աչ իշտ. ուզ,  
ուզանց, կ'ուզանանէ:

ՀԱՅ ՄԱՆԶԲ

Ես հայու մանչ եմ,  
Կ'ուզեմ հայ մեծնալ,  
Ճիշդ այպէս կ'ուզեն,  
Հայրս ու մայրս ալ:  
  
Ամէն օր առառւն,  
Երբ տունէն ելնեմ,  
Կը վազեմ դպրոց,  
Դասերս կ'առնեմ:


Ու երբ օր մըն ալ,  
Մեծնամ, մարդ ըլլամ,  
Հայու մանչ եմ ես,  
Հայ պիտի մնամ:

Մայրիկ, վարժուհիս ո՞րքան բարի է,  
Բոլոր տղաք ալ կը սիրեն զինք,  
Մեր դասարանը շատ ընդարձակ է:  
Նըստարանները նոր են եւ մարդուն:  
Քունէ:  
Աղջիկ եւ մանչ յիստուն հոգի:  
Ենք:  
Ես շատ կը սիրեմ ընկերուներս,  
Ժամը ին-նին դպրոցի զանգակը կը դարնէ:  
Բոլոր տղաք դասարան կը մտնեն:  
Վարժուհին մեր հետ կ'աղօթէ:  
Վարժուհին ըստ, որ ամէն դիշեր աղօթենք:  
Բոլոր օրը դասեր գը-րե-ցինք:  
Վարժուհիս սեւ տախ-տա-կին վը-ըայ պատկերներ գը-ծեց:

Ես ալ կընամ պատ-կեր գծել:  
Ժամը երեք ու կէսին դպրոցէն կ'ել-  
նենք:

Մայրիկը կ'ուզէ, որ չի-տակ տուն  
դանք:  
Պէտք չէ որ ուշ մնանք,  
Բարի տղան մայրիկին խը-րա-տը  
մտիկ կ'ընէ:

Վարժուիր, շաբաս, ծառ, թօն,  
պատճեր, պարբերակեր թօն ու  
պատճառահին վրայ - աղօթէնք, աղ-  
ջիկ, և այս, ընդուր - ընդուրակը.  
Հանգանից են չարնեւ . ոչ ոչ չ-



Մայրիկ կընա՞մ Սօֆիին հետ խա-  
տալ:

Սօֆի մեր գը-րա-ցի-ին աղջիկն է:

Արամ ալ Տիրանին հետ է:

Տիրան Սօֆիին եղբայրն է:

Սօ'փի, եկո՛ւր մեր պարտէզը:

Հետդ գըն-դակ խաղանք:

Դուն դէ-մըս կե-ցիր,

Քիչ մը մօտ եկուր,

Ես գնդակս նետեմ,  
Դուն ալ ձեռքդ բաց,  
Սօֆի բոնեց գնդակը,  
Գնդակս ո՞ւր է:  
Խոտերուն մէջ գնաց,  
Հիմա գտայ, ո՞րչափ ուրախ եմ.  
Սաթենիկ, մայրիկը քեզ կը կանչէ  
Ա՛լ ժամը հինգ է,  
Մնաս բարով Սօֆի,  
Երթաս բարով Սաթենիկ:

Չնցաց, խաղանք, Աօթիր հիշ -  
իս ոդդիք, շուշ բոնչ. Ժի՞  
շախ խոցերուն մէջ Ժնայ .  
Արրան Աօթիր խոբայրն է .  
Տայրին չի նշ կանչէ . Բայս  
Բարով, Երթաս Բարով :


Մայրիկս շատ յոդ-նած է,  
Միշտ կ'ուզեմ օդ-նել մայրիկիս,  
Մայրիկ, ի՞նչպէս կրնամ քեզ օդ-  
նել,  
Մաքուր լաթով մը պնակները կը  
որբեմ:  
Ահա դդալ, դանակ ու պատա-  
ռա-քաղ,  
Հիմա ասոնք ալ կը չորցնեմ,  
Սեղանին ծած-կո-ցը կը մաքրեմ,  
Աթոռներուն փոշին կ'առնեմ,  
Խո-հա-նո-ցը կ'աւլեմ,  
Ետքը կը լուամ ձեռքերս եւ ակո-  
ներս:  
Արա'մ, ժամը ութ է,  
Պէտք է երթալ քնանալ,  
Կանուխ պառկինք, որ կանուխ ել-  
նենք:

Աղօթել չմոռնանք,  
Գիշեր բարի, հայրիկ,  
Գիշեր բարի մայրիկ:  
Այսուհե, Ջաթկոյ, խոհանոյ, սա-  
շառափառ, փոշի, շանակ, ոչ-  
Ժայ, զաթ, բարի, ախույ, Կ'ա-  
լով, Կ'չ չորցնեմ, Տայրինդ օթք:

Ժ Ա Մ

Տղաքս, այսօր կի-րա-կի է,  
Գործել, խաղալ լաւ չէ:  
Սաթենիկ, Արամ, պէտք է շուտ  
լու-ա-ցու-իլ ու հա-գու-իլ,  
Նոր ըզ-գեստ-նիդ հա-գէք,  
Նախաճաշ ընենք եւ հայրիկն ալ  
միասին ժամ երթանք:  
Ժամը Աս-տու-ծոյ տունն է,  
Ժամին մէջ կ'-ա-ղօ-թեն ու կ'եր-  
դեն:  
Տէր հայրը պա-տա-րագ կ'ընէ:  
Տղաքս ժամուն մէջ լուռ եւ պար-  
կեշտ եղիք:

Տաօթ, Տաօթուշ, Ծիցուծոյ, Կի-  
րակի, Հուացուիչ, Բագուիչ,  
Հշդիստ, Հժիստ, Բագդի, Կա-  
պարագ, Հուռ, Կարբդշ:



ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ

Աստուած, հայր մեր,  
Հազար փառք քեզ,  
Որ մենք այսօր,  
Գացինք դպրոց

Գըրել, կարդալ,  
Սորվեցանք մենք,  
Հայ ալ կերանք,  
Խաղանք շատ շատ,  
Հիմա կուգանք,  
Քունի ատեն,  
Խնդրել քեզմէ,  
Որ պահես մեզ,  
Անփորձ, ամէն:



# ՀԱՅԳԻՐԴ

Բ. ՏԱՐԻ

Առաջին Տարին յետոյ լաւագոյն դասագիրը<sup>ի</sup>  
Ամերիկայի Հայ Մանուկներուն համար:

# ՀԱՅԳԻՐԴ

Ա. ՏԱՐԻ

ԳԻՆ ՅՕ ՍԷՆԹ

ԴԻՄԵԼ ՀԵՂԻՆԱԿԻՆ՝

Mrs. G. A. NAZAR  
156 Albion Street  
Somerville, Mass.

ԿԱՄ ԵՐԱՆ, ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՒՐԻՇ ՀԱՅ  
ԳՐԱԾՈՒՆՆԵՐՈՒ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԵԶ :